**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Փշատավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճների վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 04.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 պայմանագրում 05.04.2024թ. կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշում |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10**

**04.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 գնման պայմանագրի**

ք. Երևան 05.04.2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԼԱՅՆ ԱՖ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն՝ Գ. Մեսրոպյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Փշատավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճների վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 04.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Համաձայնագրով նախատեսված գումարի շրջանակներում աշխատանքներն իրականացնել Պայմանագրի N 2 հավելվածով հաստատված օրացուցային գրաֆիկին համապատասխան:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, իսկ Համաձայնագրի հավելվածը՝ 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հանելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011034692, 900011034700 900011034718,900011034726<br>ՀՎՀՀ 02565827 | «ԼԱՅՆ ԱՖ» ՍՊԸ<br>Ք. Եղվարդ, Պ. Սևակի 1-ին փ. Տ. 25<br>«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 1150003095225291<br>ՀՎՀՀ 03557973 |
| Գլխավոր քարտուղար՝<br>_______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>_______________ Գ. Մեսրոպյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
04.04.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 գնման պայմանագրի.
05.04. 2024թ. կնքված N 10 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2023թ. վճարված գումարը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45451700/16 | ՀՀ Արմավիրի մարզի<<Շահումյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ | 126 587 475 | - | - | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 | 19 329 489 |
| 2 | 45451700/17 | <<Փշատավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ | 202 477 281 | - | - | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 | 10 100 |
| 3 | 45451700/18 | <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ | 176 597 911 | - | - | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 | 65 560 755 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 45451700/19 | <<Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ | 273 896 748 | - | - | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 | 3 312 512 |
| Ընդամենը | | | 779 559 415 | - | | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 | 88 212 856 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ
900011034692, 900011034700
900011034718,900011034726
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

«ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Պ. Սևակի 1-ին փ. Տ. 25
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150003095225291
ՀՎՀՀ 03557973

Տնօրեն՝

_______________ Գ. Մեսրոպյան
(ստորագրություն)

Կ.Տ.

BANK
AMIO

N 2538-02

**ԵՐԱՇԽԻՔ**
**(որակավորման ապահովում)**

«03» 04 2024

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/18 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԼԱՅՆ ԱՖ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/18 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 21,378,000 (քսանմեկ միլիոն երեք հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

**5.** Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/18 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված օրերի քանակից առնվազն իննսուն աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան 30.06.2025 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/18 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի խորհրդական,
Կորպորատիվ բիզնեսի կառավարման
դեպարտամենտի տնօրենի ժ/պ

Ա. Պետրոսյան


«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am